

տարրերը եւ շատ անգամ անորոշ նշանակութիւններով, նա մանաւանդ երբ մասնաւոր, ճիշդ ու յարմար բառերն ունին իրենց տրամադրութեան տակ :

Պատնակութիւնը ուրեմն չենք կրնար մեր նախնիքներուն վերագրել, այլ այժմու բառադէտներուն, որոնք մասնաւորաբար տնային, արհեստական (հիւսուածեղէնի, մետաղագործութեան, կահարասիներու, եւն.) նիւթերու մասին անկարելի է որ հարկ եղած ծանոթութիւնները ունենային գրականութեան մէջ երեւցած բաները հաւատարմօրէն վերծանելու : Ատիկա չէր կրնար կատարուիլ քանի որ մեր մշակութեային հասարակ այդ ճիւղերը դեռ չեն ուսումնասիրուած մեր մէջ եւ նոր ի նորոյ կ'ուսումնասիրուին : Դեռ անձանօթ կը մնանք մեր նախնիքներուն սովորական նիստ ու կացին, իրենց առօրեայ կեանքին, իրերուն կամ անոնց կոչումներուն, նոյնպէս հայ տարազին, ձեռարուեստներուն եւն. : Իսկ բառի մը ծագման հետ կապել անոր հայ իմաստը, կամ անոր տալ, օրինակ, օտար բնազրի մը մէջ գործածուած բառին բուն իմաստը, ըստ իս սխալ է : Այսօր այլեւս վաւերական յիշատակարանով մը կը տեսնենք թէ ԱՐԿԱՆԵԼԻ գորգ կը նշանակէ : Յովհաննէս Երզնկացի քերականագէտը ԺԳ դարուն կը վերկայէ որ ԿԱՊԵՐՏ գորգ կը նշանակէ : Սակայն եթէ չդոնուէր այն գորգը, որուն յիշատակարանին մէջ ԱՐԿԱՆԵԼԻ գորգ նշանակուած կը գտնենք, մեր մէջ պիտի չարունակուէր «բառադէտներու» (կեղծ կամ չիտակ) սխալը, ԱՐԿԱՆԵԼԻՆ վերաբերու կամ ալ չեմ գիտեր ուրիշ ինչ նշանակել տալու, հակառակ ատոնց բունագործիկութեան :

Առնենք ԲԱԶՄԱԿԱՆԵՐ, որուն համար ի միջի այլոց ըսուած է «բառադէտներէ» թէ՛ կը նշանակէ նաեւ սեղանի շուրջ նստելու տեղ : Դժբախտաբար անոնք նկատի չեն առած որ Արեւելքի մէջ, այսինքն Հայաստանի եւ իր դրացիներուն մօտ հինէն մինչեւ նոյնիսկ մեր օրերը ճաշը, կամ սեղանը կը «կազմուէր» կամ կը յարգարուէր սրբօնալ գորգի կամ գորգերու վրայ, ուրեմն «սեղանի շուրջ նստելու տեղը» արտառոց բացատրութեան տեղ մեր նախնիք գործածած են ԲԱԶՄԱԿԱՆ, որ սեղանին շուրջը նստելու տեղին վրայ սփռուած գորգերը կը նշանակէ : Այսօր իսկ կան օտար բառեր, օրինակ, «նամագի» որ ազօթելու գորգի իմաստ ունի, կամ «սէտճատէ» (սէճատա, սէտճէ) նոյնպէս, որոնք առանձինն իսկ գորգի իմաստ ունին, մինչ, օրինակ, վերջինը արաբերէն է եւ կը նշանակէ «երկրպագութիւն, ազօթը» : Բնական է մեր արդի բառադէտները չէին կրնար գիտնալ թէ սեղանի շուրջ նստելու տեղը միայն գորգերով կը ծածկուէր, նստելու համար, ըստ մեր եւ դրացի հնագրեան եւ հաւատարմօրէն ի գործ դրուած սովորութեան :

Տարակոյս չունիմ որ հետզհետէ նոր հրատարակութիւններ մեր նախնեաց ծանօթ եւ անձանօթ նիւթերուն, մանաւանդ խղճամիտ ուսումնասիրութիւններ, մինչեւ հիմա երկրորդական նկատուած եւ ան-